

ԽՈՅԹ-ԲՈՒՆՇՈՒՆ ԳՆԻՆՈՒՆԵՐԸ
ՈՒՂԵՒՈՐԵՎԵՆ ՏԵՂԵԿԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Շարունակութիւն:)

9.

Այսօրուան իմ ծրարներս էր ման գալ Բոննա-
չէնի դաշտը, այցելել Բագրանցոց Մամաս
Աղայի բանակատեղին, խօսիլ իրեն հետ,
այցելել մի քանի յայտնի գիւղերը, եւ եթէ
հնարաւոր լինէր՝ իրիկուն նորէն վերադառ-
նալ վանքը: Թէ վանականները եւ թէ ինձ
ուղեկցող մօտեակնցի ոստիկանը միաբերան
հաւաստեցին, որ ուղղակի դժով կարելի էր
3 ժամէն քչել մինչեւ Մամաս Աղայի օրան,
բայց թէ քիւրդ նահապետը խորապէս պիտի
վիրաւորուէր եթէ այցելող անգլ. հիւպատոսը
գիշեր հիւր չմնար իրեն: Խնդրեցի
տնտես Սենոյէն՝ երիտասարդ հովիտներէն
մէկն ուղարկել նախապէս լուր տալու քիւր-
տին իմ այցելութեան մասին: Իրաւացիօրէն
առարկեց անտեսը թէ քիւրտ աղաների օրան
բաց է ամէնի առջեւ եւ թէ ոեւէ ուղեւոր կը
հիւրընկալուի ըստ իւր կարգին՝ առանց ոեւէ
ձեւականութեան:

Երեք քառորդի չափ դուրս եկայ դէպի
Տորոսի դօտին, բարձրացայ ուղղակի դէպի
արեւմուտք երկարող առաջին բարձունքը:
Այստեղ գորշ գեղին գոյն հող է խտնուած
աւաղի ցանցաւ մի խաւով: Հողի տակէն պա-
տահարար դուրս կը ցցուին սև ժայռեր դա-
նազան բարձրութեամբ: Առաջին բարձունքին
վրայ կան միմիայն մացառի եւ թիփի կոյտեր
եւ հազիւ ոեւէ ծառ: Եթէ ունենայի ժամա-
նակ՝ մօտ երկու ժամ, եւ բարձրանայի եր-
կրորդ սեպ եւ կոնաձեւ կարատուած կատարը,
իմ առջեւ պիտի պարզուէր նախ եւ առաջ
Ս. Առաքելոց վանքը, Միրընկատար լեռը եւ
ամբողջ հիւսիսային Սասունը եւ Մուշ քա-
ղաքը: Ասոնց բոլորը այցելած էի նախապէս
եւ բացում անդամներ: Վերադարձայ Ս. Աղ-
բերեկ եւ մի թեթեւ ճաշէ յետոյ ժամ 10 քա-
ռորդ անցած մեկնեցայ դէպի Բոնաչէն՝ Գա-
ւաղ Գրիգորի եւ քիւրտ ոստիկանի ուղեկցու-
թեամբ, բեռն ու ջրեպանները թողնելով
վանքը:

Վանքի սարահարթէն դէպի Բոնաչէն՝
վայրէջքը սեպ եւ խորտուրտա է: Անհնարին
եւ անօգուտ է ձի նստիլ. վայրէջքը տեւեց 35
րոպէ յոգնեցնելով մանաւանդ ձիերը: Բոնա-
չէնի դաշտին այս եզրը ունի մօտաւորապէս

այն մակարդակը ինչպէս վերեւ յիշած Գոնը
գիւղը: Այս լեռնակողէն կաղմուած առուակը
մի քանի րոպէէն կը միանայ Խոյթի գետին,
որ ուրրտապայտա եւ երբեմն ճիւղաւորեալ կը
հոսի դէպի հարաւ-արեւմուտք: Անցայ մի
չորացած հեղեղատէ եւ 10 րոպէէն անցայ
Խոյթի գետի գլխաւոր ճիւղը եւ մտայ՝

Շամեանք, ծագումով մի հայ գիւղ, սա-
կայն 1905էն ի վեր բզբբջի քիւրդեր զբաւած
էին գիւղը: 1908ի Սահմանադրութենէն յե-
տոյ Մանաղիկերազն եւ Խնուսէն վերադարձած
էին հայ բնիկները, եւ այժմ կայ 13 տուն հա-
մեմատարար բարեկեցիկ. ունին եզ, կով եւ
ոչխար. շինած են մի քանի նոր հիւղեր: Ունին
պարտէզներ, որի ծառերը բեռնաւորուած
էին անձով, ընկոյզով եւ խնձորով: Ինձ
նուիրեցին նաեւ մի քանի ողկոյղ ընտիր խա-
ղող: Գրիգոր իրենց նուիրեց մի տուփ շա-
քար, եւ ձիու սանձը բռնող վառվուռն պա-
տանիին ձեռքը դրաւ 10 դրշ., պատմութիւն
սկսաւ պարել եւ երգել, պատճառելով ընդ-
հանուր ուրախութիւն: Բարձրացայ մի չոր
եւ լեռի բլուր, որի հարաւային ստորտար կը
հոսի մի առուակ, հաւանաբար Խոյթի գետին
մասը. եւ մտայ Գաշտամիրան, ճիշտ վերնոյն
պէս, տարիներ առաջ պարպուած Հայեթից եւ
մինչեւ 1908 գրաւուած Խարզանէն եկած բա-
րազցի քիւրդերից: Այժմ կայ 20—21 տուն
հայ վերադարձած Բաթնոցի Բէօն Հիւսէյն
բաշայի ծառայութենէն: Մնացած են միմիայն
երկու տուն քիւրդ՝ իրրեւ հովիւ եւ բարեկամ
հայերին: Գիւղը ունի համեմատաբար աւե-
րակ երեւոյթ. սակայն ունին մի քանի լուծք,
ոչխար եւ այծ: Բարազցիների տէրութեան
ժամանակ կարուած էին ծառերի կարեւոր
մասը: Գաշտամիրանէն 5 րոպէ հեռու դէպի
արեւելք, միւսնոյն բլուրի ստորտար կը գրա-
նուի Զօրավա, նախապէս զուտ հայաբնակ
գիւղ՝ 15 տունով. սակայն վերջին տարիների
ընթացքին մօտեակնցիներ զբաւած էին եւ գեռ
կը մնան անդ: Գիւղին Ս. Թորոս եկեղեցին
կը ծառայէ իրրեւ քիւրդերու գերեզմանոց:
Գեռ կանգուն են հայկական խաչքարեր եւ հին
արձանագրութիւնները: Մի յոյժ փափուկ
հարց, որի մասին խօսեցի Մամաս Աղային:
Վերայիշալ երեք գիւղերը՝ Շամեանք, Գաշ-
տամիրան եւ Զօրավա, բնիկներէ կը նկատուին
որպէս միւսնոյն մեծ գիւղին տարբեր թաղերը:

Տակաւ առ տակաւ կը սկսին կանաչ մար-
դեր եւ առուակների եզերքներին ծառերի
խուճերը: Մի քանի րոպէէն ձախ թեւիս բաց

դաշտի մէջ մի առուակի եզրին թողուցի Գո-
ւրկանք, մօտ 30 տուն զուտ քիւրդ գիւղ-
գիւղի անունը հաւանաբար ծագած է իր դոմ
լինելէն: Շատ մեղմօրէն բայց զգալապէս կը
սկսիմ բարձրանալ եւ սովորական ճանապարհ-
հին վրայ անանուն մի առուակի ալիւն մտայ
Գաշտամիրան, լայնօրէն սիրուած եւ պարտէզ-
ներով շրջապատած մի մեծ գիւղ, նախապէս
զուտ հայ: Ռէն Միսաք հաւաստեց ինձ որ
«ժամանակաւ» գիւղը տուած է ուսեալ վար-
դապետներ եւ քահանաներ, որոնք կ'ուսա-
նէին կամ Ս. Աղբերեկի եւ կամ Մշոյ Ս. Կա-
րապետի վանքը: Գանդատեց որ Աւէսի Սէլիմ
գեռ մինչեւ այսօր պարպած չէ հայերէն զբա-
ւած տները, թէեւ նա հարկադրուած է հայ
տէրերին վերադարձնել գիւղին ջրաղացները:
Վարդոյ դաւառը գտնուող գիւղացիք կը սպա-
սէին իրենց տների եւ հողերի յանձման, որ-
պէս զի վերադառնային իրենց հայրենիքը:
1908ին հայ ընտանիքների թիւը իջած էր
մինչեւ 8ի, իսկ այժմ հասած է 25ի: Կան նաեւ
քիւրդ ընտանիքներ նստած հայերի տները:
Մի խոշոր քիւրդ տղամարդ, որ ինքնահրաւէր
եկաւ նստելու իմ կողքին Պր. Միսաքի դրան
առջեւ, կը խնդրէր Գրիգորէն տեսնել մեր
զէնքերը: Երկու անգամ քնքշութեամբ մեր-
ժելէ յետոյ Գրիգոր ստիպուեցաւ տալ մի ա-
քացի եւ արտաբերել քիւրդը: Ռէն Միսաքի
վարձունքը եւ խօսքերը իմ վրայ թողուցին
այն տղաւորութիւնը, որ Գաշտամիրան հին
ժամանակ եղած է Բոնաչէնի մայրաքաղաքը,
թէեւ ինք ոչինչ ստոյգ կըցաւ հաղորդել:
Իրիկունս երբ հարցուցի Մամաս Աղային այդ
մասին, քիւրդ ցեղապետը ըսաւ որ «չստ շատ
տարիներ յառաջ էրմանի բաշ-վափիլը այդ
գիւղին մէջ ունէր հուսիսք եւ սարայ»:

10.

Ժամն արդէն 1 է, արեւը տաքցած է:
Եթէ ընթանամ այս գնացքով կանգ առնելով
ամէն գիւղ, շատ ուշ կը մնամ իրիկունս եւ
քիչ ժամանակ կ'ունենամ խօսելու Բագրան-
ցոց ցեղապետին հետ: Ինչպէս գրեցի վերեւ՝
վանքին մէջ ինձ հաւաստեցին որ ուղիղ դժով
երեք ժամուան ճամբայ էր մինչեւ ցեղապե-
տին օրան: Սակայն ինչպէս փորձառութիւնը
միշտ սովորեցուցած էր ինձ, այս անգամ էլ
գտայ, որ մօտ հինգ ժամուան ճամբայ էր,
բայ ի գանաղան գիւղերի մէջ զաղարներից:
Մեկնելով Գաշտամիրան, դէպի ձախը, դէպի
Սօտկանի գառիթափերի ստորտար թողուցի

Գեռ, զուտ քրտաբնակ գիւղը, իսկ դէպի աջ,
մի ձորի մէջ Արիւօֆ, առաջները՝ զուտ հայ,
1908ին մնացած էր միայն 1 հայ ընտանիք:
Բարազցի Աւէսի Սէլիմ եւ Նասո եղբայրներ
գրաւեցին գիւղը, եւ մինչեւ այսօր էլ կը տան-
ջեն վերադարձող հայ բնիկներին: Առանց
հանդիպելու Արիւօք (ինձմէ պիտի առնէր մի
ժամ) քչեցի արագ եւ իջայ մի մացառապատ
բլուր, եւ ինքզինքս գտայ մուտքին Ուշուտ
հայ չէն գիւղին, 35 տուն հայ բարեկեցիկ ու
լաւ հաղուած ընտանիքներ: Վերջին ժամա-
նակներ միայն՝ գիւղ հաստատուած էր սա-
տանցի քիւրդ Մհէր Մամէն, Սահմանադրու-
թենէն ի վեր բոլորովին առանաթափ: Կանգ
առի գիւղին Ս. Ստեփանոս մատուռին առ-
ջեւ, բայց ոչ քահանան՝ Տէր Սարգիս եւ ոչ
ալ Ռէն գիւղն էին. քահանան ամէն օր կը
կատարէ ժամերգութիւն, ունին լաւ սպաս եւ
հին ձեռագիրներ: Սակայն քահանայի բացա-
կայութեան պատճառաւ չկըցայ մտնել մա-
տուռը: Գեղեցիկ եւ ծառազարդ գիւղ է, կայ
առատ ընկոյզ եւ խաղող: Մեղուների առա-
տութիւնը գիւղին բոլորտիքը՝ կը նշանակէ
նաեւ առատ մեղր. հինգ րոպէ հեռու արտե-
րու մէջ կ'արածէին ձիեր, կովեր եւ մի քանի
կոնքեր:

Ուշուտէն 20 րոպէ ուղղակի դէպի արեւ-
ելք կը դանուի՝ այժմ զուտ քրտաբնակ Հըն-
դուլի գիւղը 80 տուն բնակչութեամբ. իսկ
դէպի արեւմուտք մի քառորդ հեռու, բայց
Ուշուտէն անտեսանելի Բլօխանք. չկըցայ
ստուգել թէ այդ գիւղը Բոնաչէնի՞ կը պատ-
կանի թէ Սասունի Շատախ գաւառին:
Արդիւ Համիդի օրով Բարազցի եօթն աշի-
րէթներ երկար ժամանակ պայքարեցան իրար
դէմ սպահնալու համար Բլօխանքի խափիլի
իրաւունքը: Բաղխունների ընթացքին Բա-
րազցիներ իրարմէ սպանեցին տասնեակներով
մարդիկ: Գիւղի հայութիւնը բաւական տու-
ժեց քրտական կռիւների հետեւանքով, ի
հարկէ նիւթապէս. Հայերը ոչ մի անձի կո-
րուած չունեցան, քանզի հակընդդէմ քիւրդ ա-
շիւրէթները, պատահաբար կողոպտելով հան-
գերձ հայերին, ինքզինքնին կը զոհէին պաշա-
պանելու հայ գիւղացիներին, անոնց տուն ու
տեղը: Այժմ կան մօտ 30 տուն բաղխանքում
ընտանիքներ: Կը թուի որ 1906ին Բարազցի
երիտասարդներէն մէկը փախուցած էր Բլօ-
խանքի մի երիտասարդ հայուհի: Սակայն
վերջէն ստուգեցի որ Պօրօտ անունով այդ
հայուհին, հիանալով քիւրդ տղամարդու քա-

Ղութեան՝ իր սեփական կամքով փախած էր քիւրդին հետ:

Ս. Աղբերիկէն մեկնելէս ի վեր հետեւած եմ հարաւարեմտեան մի ուղղութեան: Ուշուտէն սկսեալ աւելի շեշտուած կերպով լեռնային եւ մացառու է դաշտանկարը: Ինչ չափով որ կը յառաջանամ դէպի Բագրանցի գիւղապետին օրան, այն չափով դէպի արեւմուտքը, դէպի իմ ձախ թեւս կ'երկարին Մօսկանի վայրի եւ անտառաշատ շղթաների դառիթափերը: Այդ գառնիթափերէ մէկի ստորոտը, ինձմէ մօտ երկու ժամ հեռու, Մօսկանի եւ Բոնաչէնի սահմանին վրայ կո գրտնուի Գաաա դիւղը, երբեմն 25 տնտր զուտ հայաբնակ, այժմ Մահմադրութեան երբորդ տարուան մէջ անգամ քիւրդերը գրաւած են գիւղը: Ինձ ուղեկցող ստիկանը, մօտեանցի մի քիւրդ՝ հաւաստեց, որ Մօթիկ Սուլ Գոստէն մի քիչ հեռու կը թափի Հուշեթ-Չային (Սոյթի գետ) մէջ: Ընկուզիկի հայերէն ստուգեցի, որ Գոստի մէջ չկայ ո եւ է հայ. բնիկները չեն համարձակիր վերադառնալ. եւ թէ քիւրդերը հայ եկեղեցին վերածած են ոչխարների փարախի: Իսկ Գոստի եւ Բլօհանքի միջեւ, «մի բլուրի վրայ» կը գրտնուի տարիներէ ի վեր զուտ քիւրդ Դաշտասօրիկ, մօտ 100 տուննոց քրդական գիւղը: Իսկ իմ աջ թեւին, դէպի հիւսիս-արեւմուտք արդէն անհետացած են Ս. Աղբերիկի պատանդան կազմող Տորոսի զանգուածները եւ հեազհետէ դէպի երկինք կը սուրան Ս. Մարաթուկ եւ Անտոք լեռանց ձիւնապատ գաղաթները: Մասունի հաստարուն այս լեռնապարը հեռուէն կ'երևի անյուսալիօրէն խոնիրաւուն, եւ դիրքերն ու ուղղութիւններն անորոշելի, կարծես շղթայուած իրար եւ միաձոյլ մի զանգուած: Այդ պատճառաւ էլ թէ հայ ուղեւորները եւ թէ արեւմուտցի ճամբորդները նկարագրութեանց մէջ ցարդ գրուած չէ մի յստակ եւ որոշ ուրուագիծ Մանանայքի լեռնազրութեան՝ թէ հին հայկական աշխարհագրութեան լայնագոյն առումով եւ թէ ներկայ վարչական բառախօսութեան տեսակէտներէն¹:

Ճանապարհէն զօրծեցի հինգ բուպէի մի

¹ Ի հարկէ անբանաւոր է անտեսել այս դաւաճանքի երկրագրական միութիւնը, բայց Սոյթ-Բոնաչէն-Մօսկանի զանգուածը որոշապէս դժել կարենալու եւ անոր յարաբերութիւնները թէ Մանանայքի եւ Աղծնիքի հետ երեւան լեռներու նպատակաւ ներկայովս դուրս կը թողում Մասունը, այն սահմանափակ մտքովս որին ընդերացած է աշխարհը 1894ի անցքերէն ի վեր:

շեղում դէպի հարաւ այցելելու համար կաննչ դաշտի եզրին գետեզուած Ընկուզիկ հայ գիւղը, խակապէս ընկողի եւ ամենազրի պտուղների մի շտեմարան: Գիւղին շրջակայքը դեռ կանգուն են կիսաւեր տների պատերը: Այժմ կը բովանդակէ 10 տուն հայ եւ 7 տուն քիւրդ: 1894էն առաջ զուտ հայաբնակ եւ հարուստ գիւղ էր: Բալապցի Նասրի Սէլիմի խալափները գրաւած են նաեւ գիւղին հողերի եւ արօտալայրերի մէկ մասը: Այս վերջինէս կէս ժամ դէպի հարաւ կը դանուի երբեմնի բարձաշատ գիւղը Մաիքուբաքի, 65 տուննոց. այժմ զուտ քիւրդ գիւղ: Գրտական Մասունէն գաղթող այս բալապցիները գրաւած են գիւղն աւելի քան կէս դար առաջ:

Շարունակելով իմ ճանապարհը ուղղակի դէպի արեւմուտք եւ բարձրանալով 30 կանգուն բարձր մի բլրանցք, լեռան միւս գառնիթափին իջայ Բլրիկ, քիւրդերի Բառօթը (Արեւադէմ) գիւղը:

Ամարիկայ Նատրը Աղան գրաւած է գիւղը, ուր կ'ապրի ինք 20ի չափ քիւրդ Ռայա ընտանիքների քրտնքով: Մահմադրութենէն ի վեր վերադարձած են 4 հայ բնիկ ընտանիքներ: Նատրը Աղայի զինուած քիւրդերը վաղեցին դէմս խնդրելու, որ իջնեմ գիւղը իրբեւ Բէկլի մասփիր: Ուղեկցող քիւրդ ստիկանը նկատելով որ ես անցայ առանց կարեւորութիւն տալու անոնց խնդրանքին, ինքնուրոյն սրամտութեամբ պատասխանեց որ Ինգլիզի բէկը շալրմ մարդկանց մասփիր չի լինի:

Անցայ գիւղին առուակէն եւ 25 բուպէի չափ տակաւ բարձրացայ մի լեռնակող, որի կատարէն արդէն սկսեցին երեւալ օրաներն ու հօտերը: Ոստիկանը հաւաստեց որ մէկ ժամ հեռու իմ ձախ թեւին, Մօտկանի լեռանց ստորոտը կայ Մգրէ, նախապէս մի հայ գիւղ, այժմ ամբողջապէս գրաւուած քիւրդերէ: Իսկ աջ թեւին բաւական հեռու կար Ուշաքափ, նախապէս զուտ հայկական գիւղ, իսկ այժմ բոնադրուած Բալապցիներէ: Այս իրողութիւնները հաստատեց նաեւ Արուզիկի հայ երիտասարդը:

Լեռան կատարին կանգ առի տասն բուպէ. ժամ 5½ է արդէն եւ արեւը կը հակի դէպի Խարզանի լեռանց ստուերները: Դեռ բաւական ճամբայ պէտք է կտրել մինչեւ Մամատ Աղայի օրան: Ոստիկանը խոստովանեց որ ինք այլեւս չի գիտեր ճանապարհը, որովհետեւ այս կողմերը այցելած չէ երբեք: Մօտ 7 բուպէ հեռու խոր դաշտին մէջ կար մի գիւղ,

որոշեցի իջնել գիւղը եւ վերցնել մի առաջնորդ: Արուկ. Խամիկի Ռամազանը գրաւած է նախապէս հայ գիւղը եւ Ս. Ստեփաննոս եկեղեցին վերածած է խոտի ամբարանոցի: Մահմադրութենէն ի վեր վերադարձած են 4 տուն բնիկ հայեր եւ դատ բացած են Ռամազանի դէմ: Հայ երիտասարդներէն Մխօն մի միջհասակ եւ թեթեւօտն տղամարդ լաւ ծանօթ ճանապարհներին, առաջարկեց միանալ ինձ առաջնորդելու դէպի Մամատ Աղայի օրան: Մխօն յայտնեց, որ ուղիղ ճամբով մէկ ժամ էր մինչեւ օրան, բայց եթէ ուզէի քչել բաւական խոր մի գետակի միջով, կէս ժամէն կը հասնէինք: Ընտրեցի վերջին ճանապարհը: Շուտով անցանք առուակը, որի երկու ափերին՝ ալիքաւոր բլուրների զառիթափերին կը դանուէին վրաններ, անասունների հօտեր եւ պատահաբար ախոռների չէնքեր: Անցայ երկու Բաղրանցի օրանների միջով: Մարդիկ եւ կանայք դուրս թոան վրաններէն. մանաւանդ կայտառ եւ համարձակ քրդուհիւներ ակնապիշ կը նայէին եւ կը ծիծաղէին առաջին անգամ մի շապգալի տեսած լինելուն համար: Դարձայ մի քիչ դէպի հարաւ. մի սարահարթի գլխին Մխօն մատնանչեց Մամատ Աղայի օրան, մօտ 10 բուպէ հեռու, մացառապատ լայնանիստ բարձունքի ստորոտը, եւ կանաչ մի արօտալայրի վրայ: Օրան կը բաղկանայ մի անկանոն եռանկիւնաձեւ բանակետոյէ:

Մեծ ու փոքր վրաններ մեծ մասամբ դործուած սեւ մազէ, ոմանք վերադրուած դոյնազրոյն պատաստով կը տարածուին առուակի ափէն մինչեւ լեռնալանջը: Չիբրի եւ Չորիների երամներ, ոչխարի հօտեր կ'երևին ամէն ուղղութեամբ: Մարդկանց արագ շարժումներն ու բարձրագոյն խօսակցութիւնը՝ խոռոնուած անասունների աղաղակին եւ բարձրացող մուխին, հեռուէն կը թողուն մի ուղմազաշտի տպաւորութիւն: Ոստիկանին հրամայեցի վազել առջեւէն եւ գեկուցանել իմ գալուստը Մամատ Աղային: Ոստիկանը քչեց սրբնթաց դէպի ցեղապետին վրանը, մինչ Մխօն կը բացատրէր երկրի սովորութիւնները եւ Մամատ Աղայի ազնուութիւնը: Անցայ վրանների առջեւէն շունների հաջոցի եւ քրդերի հետաքրքիր ակնարկների տակ եւ կանգ առի Մամատ Աղայի մեծ ու զարդարուն վրանի առջեւ: Քիւրդ զինուած թիկնապահներ, արդէն պատրաստ կանգնած վրանի կողքին, բունցին ձիւ սանձը եւ օգնեցին ինձ

իջնել ձիւն: Մամատ Աղան վրան չէր. սակայն վրանի տակէն դուրս եկաւ իր երկրորդ գաւազը՝ Ֆէրդուն բէգը, մի առնական վայելուտ տղամարդ. Չերմօրէն բարեւեց եւ բարի գալուստ մաղթեց, միանգամայն յայտնելով որ «Բաբան» շուտով պիտի վերադառնար ձիւրու ըննութենէն: Հրամացուց մտնել վրան ուր արդէն բաղձած էին հինգ ուրիշ յարգելի ցեղային «Թօռուններ» եւ տարաւ ինձ վրանի գլուխը թանձր ու կակուղ օթոցների վրայ: Ըստ մեր հին աւանդութեան «Թէմէնայ» ուղղունցինք իրար: Ֆէրդուն Բէգ իմ կարծիքը աննելէ յետոյ դաւաղ Գրիգորին հրամացուց «Թօռուններ» կարգը. մեր շրացասներս ալ իր ձեռքով մի քիչ փայփայելէ յետոյ դրաւ Գրիգորի կողքին: Գլխէս հանեցի սպիտակ ուղեւորական սաղաւարտը. եւ ահա քիւրդ «Թօռունները» մղուած անդուսպ նախնական հետաքրքրութենէ, փափաք յայտնեցին տեսնել եւ շօշափել սաղաւարտը: Փորձով գիտէի որ ինչպէս բոլոր քիւրդ ցեղապետների մօտ այդ նախարանն էր մեր հրացաններն եւս տեսնելու ինչքան քին: Այս քիւրդ տղամարդկանց համար չկայ աւելի մի խանդավառող բան քան նոր եւրոպական զէնքեր, նոյն իսկ երբեմն աւելի նախասիրական քան կանայք: Լարուած ուղղութեամբ ձեռքէ ձեռք անցուցին հրացաններն եւ խնդրեցին Գրիգորէն իրենց ցոյց տալ դործածութեան եղանակը. եղական երեւոյթ էր տեսնել այս քիւրդ բէգերի Չերմ շահապարկութիւնը առ զէնքերը: Մի հեռահաս եւ արագահարուած լաւ հրացան կը նշանակէ գերազանց զօրութիւն իր թշնամիին վրայ, ուրեմն հոմանիշ գերազանց ոյժի: Ապա այս կողմերը շտեմնուած մի այսպիսի զէնք ունեցողին կու տայ մեծ կշիռ եւ ազդեցութիւն: Գաւառէ գաւառ եւ աշխրթէ աշխրթ առասպելական զրոյցներ կը շրջին այսպիսի մի հրացանի մասին: Նոյն իսկ Մամատ Աղայի դառնալէն յետոյ, այս քիւրդ մեծաւորները չփախցուցին ո եւ է առիթ խօսելու զէնքի, անոր արժէքի եւ որտեղէն ձարելու մասին: Մինչ բէգերը հիացում կը յայտնէին թէ զէնքերի եւ թէ իմ «Ջահլութեան» մասին, վրանէն դուրս մի ձիախուճը կանգ առաւ: Մամատ Աղան էր որ վերադարձաւ: Բէգերը բոլոր դուրս վաղեցին ողջունելու նահապետին: Արդէն մութ էր թէ ներսը եւ թէ դուրսը, ազօտօրէն լուսաւորուած կազի լամպարներով եւ մեծ խալիկներով: Ես ալ մօտեցայ վրանի, դրան

ընդառաջ զնալու նահապետին : 82 տարեկան կայտառ նահապետը պարուրած իր երկայն եւ դեղազարդուած արային մէջ եւ ոսկեկոթ խոշոր դաշոյնը խրած դեղեցիկ չալէ գօտիին մէջ, մօտեցաւ արագ քայլերով եւ քամանայէն յետոյ ձեռք պարզեց սեղմելու : Գիւրդ ցեղապետները դեռ մինչեւ վերջին ժամանակներս սովորութիւն չունէին ձեռք սեղմելու, բայց ինչպէս պիտի տեսնենք շուտով, Բագրանցոց նահապետը մի բացառիկ տիպ էր : Ներս մտաւ վրանի տակ, մեկդի նետեց արան եւ բազմեց կենդրոնական օթոցին վրայ հրաւիրելով ինձ նստել իր կողքին : Թօռունների խումբը, ինչպէս նաեւ Մամատ Աղայի հետեւորդները շարուեցան վրանի ամբողջ երկայնքին եւ մի քանի բուլէ տրեց լուսթիւն, միմիայն կողմնակի փափառքներ երկու դրացիներու միջեւ : Ինքին ճաշակով պատրաստած սուրճ՝ միմիայն գլխին նստող «մեծաւորների» համար :

Մամատ Աղան սկսեց պատմել այսօր իր այցելած ձիերի յատկութեանց, քուսակների որակի եւ քանակի մասին : Իր գայրոյթը յայտնեց որ հարկերներով անասուններ ստակած կամ հիւանդ էին մինչեւ Սասուն հասնող պաշարախտի հետեւանքով, եւ թէ «Դավիթը» չէր կրնար արտին առաջն առնել : Ապա դարձաւ ինձ հարցնելու, թէ երբ մեկնած էի Բաղեշն, որ ճամբով եկած էի եւ թէ ինչպէս գտայ երկիրը «Հուրիաթի» շրջանին : Նահապետը թիւրքերէն կը խօսէր բաւական ընթացիկ, բայց արարախառն . այն ժամանակ կարող էի խօսել ընթացիկ քրդերէն, բայց ընդունուած սովորութիւն էր այսպիսի առիթներով միշտ խօսել թիւրքերէն :

Այս մեծ վրանը կը ծառայէր իրրեւ հիւրանոց մօտ 15 քառակուսի կանգուն, մուտքը բացուած դէպի արեւելք : Մրա երկայնքին եւ սպա ետեւը կան մի շարք ուրիշ վրաններ, բէգերի, կանանց, ծառաների, խոհանոցի եւ այլն համար : Դուրս՝ հրապարակին վրայ կը վառի մի մեծ խարոյկ, արձակելով առատ ճամուշներ զոնարաց վրաններէն ներս : Այս բարձունքների վրայ առաւօտներ եւ երեկոններ ցուրտ են : Ամսոյս վերջերը Բագրանցի աշիւթը պիտի սկսի շարժիլ դէպի հարաւը, դէպի Գաբլիօշ եւ Բաթմանսուի տաք շրջաններ հանդերձ հօտերով եւ վրաններով : Առ հասարակ Մամատ Աղան պահեց վերապահ դիրք մինչեւ ճաշի վերջը, երբ ներկայ էին 12 կամ 13 թօռուններ եւ հրամանատարներ :

Նա կը խօսէր քիչ եւ զրոյշ ստորեւ բացատրելի պատճառներով :

Առաջին բուլէէն զգացի որ Մամատ Աղան, Բագրանցի ցեղապետը եւ 4000—5000 այրուձի կոտլի դաշտ հանելու ընդունակ հրամանատարը մի փորձառու քաղաքագէտ էր :

(Շարունակելի :) Ա. ՍԱՅՐԱՍՏԵԱՆ



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՅՎԱԳՈՎՍԿԻ
ՃՈՎԱՆԿԱՐԻՉ

ԻՐ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՌԻԹԻՒՆԸ
(Շարունակութիւն եւ վերջ :)
Ի Գ .
ԱՅՎԱԳՈՎՍԿԻԻ ԳՊՐՈՅԸ

«Այլազովսկի մասնաւոր զօրոց մը բացած էր ծովանկարչութեան, որմէ ելած են... անուանի ծովանկարչներ»¹ : Այլազովսկի աշակերտներու մէջ նշանաւոր հանդիսացան Լազորիոյ, Բողոլիւրով, Սուզկով եւ Կուլինձի (Գուլումձի), որոնց առաջինը սպա Պետերբուրգի նկարչութեան ձեմարանի մէջ ուսուցչակապ կարգուեցաւ :

Լազորիոյ Այլազովսկիի ձեռքին տակ զարգացուց իր տաղանդը : Ինքն եւ Կուլինձի, որոնց յորեկար Այլազովսկի արեւաշատութիւն մազթած էր երբեմն, իրենց ստեղծագործութիւններու մէջ երեւան բերին ինքնայատուկ նկարազեր մը : Մինչ առաջինը Վարպետին մասնաճիւղը յատուկ տարաւ, ինքնուրոյն բան մը զննելով իր ճաշակէն, միւսը հռչակ հանեց աւելի գաշտանկարչութեան մէջ :

Իրենց արտադրութիւններու մէջ աւելի Սուզկով եւ Բողոլիւրով մտերիմ են իրարու, քան Կուլինձի եւ Լազորիոյ : Մինչ Լազորիոյ եւ Կուլինձի իրենց համար իտալական մոտիւնք կ'ընտրեն, Սուզկով եւ Բողոլիւրով կը սիրեն գործել Կաւկասեան երկիրներու ներշնչումին տակ : Վերջիններու քով նկատելի է հաւասար ճիգը Վարպետին լուսավառութիւններն ու թանձր ստուերները, անոր խաղաղութիւնն ու ալեկոծութիւնը, անոր անտառուտ եւ ձիւնապսակ գաղաթները վերաբ-

¹ Մարտիան, Հանդ. Ամս., 1900, էջ 187 :

տաղրելու, ի հարկէ միշտ իրենց սեփական տաղանդին թռիչքով :

Այլազովսկի ուրիշ կարող աշակերտներ այ ունեցաւ . անոնք փայլեցան Վարպետի մայրամուտքին ինչպէս փողփողուն աստղեր : Պիտի յիշեմ այն դէմքերն միայն, որոնք թէպէտ չկրցան երկար վայելել Վարպետին առաջնորդութիւնը, բայց մնացին կապուած անոր ուղղութեան :

Էմմանուէլ Մահդեմեան Խրիմի ափերուն վրայ ծնած (1857) եւ մեծցած էր : Աշակերտելով Այլազովսկիի՝ ընդունած էր անկէ հրահանգներ, արուեստին գաղտնիքներուն թափանցելու : Արդէն ընդունակ ի բնէ կրցաւ շուտով իւրացնել արուեստին ըմբռնումը եւ դարձանալ սեփական ուղղութեամբ : Նա ձեմարանը աւարտեց 1888ին : Իր բաղամթիւ նկարներուն մէջ նշանաւորայինն են Գիշերը Սեւ ծովի վրայ, Աղալարի Անճրեւեմ ետքը եւ Հողմը կը սաստկանայ :

Գեորգ Բաշինջաղեանի տաղանդը նուիրուեցաւ հայ հողին, հայ ջուրին : Նա սիրեց մեր հովիտներու վայրէջքը, մեր ամայութիւնը, քարքարուտ առապարները : Նա մեծ յաջողութեամբ պատասխի վրայ փոխադրեց ձիւնապատ Արարատը, ներկայացուց նախադարունի խրատիւնները, ձիւնահալքը, փըթթումը, տերեւթափն ու հերկը :

Վ. Սուրեմեան կը հմայուի հայ կեանքով, հայ շինուածքներով . կը փորձէ նոյն խի մարմնաւորել հայ զիւցաղնական վէպ մը : Իր մէջ հզօր արասայտաթիւն է յղացումը : Նա այնպէս թափանցած է արեւելեան շինարուեստի, տարազի ծաղերուն, այնպէս քաջ ծանօթ մըն է արեւելեան բարբերու եւ կենցաղին, որ ստիպուած ենք բացառիկ տեղ տալ իրեն պատմա-գեղարուեստական արուեստագէտներու շարքին : Յիշենք իր գործերէն «Արայ Գեղեցիկն եւ Ծամիրամ» . «Սաչվերաց տօն է էջմիածնու», «Ս. Հոխիսիմէի վանքը» եւն :

Նոյն ուղղութեան հետեւեցաւ Ա. Յէրվանեան :

Իսկ Ս. Շամշինեան (ծն. 1856, Թիֆլիս) մշակեց Հայ Կաւկասի սպորտիստներն ու սովորութիւնները : Իր գործերուն մէջ բնականութիւնն եւ գունաւորման արուեստը մասնաւորաբար արժանացան զնահատուկութեան : Իր նկարներն՝ «Թիֆլիսի Շէյթանբազարը», «Ղէյսօրա» եւ «Օրս» հրաշալի եւ կենդանի վերարտադրութիւններն են տեղա-

կան սովորութիւններու, կենցաղի եւ տաղաղի :

Գ. Գաբրիէլեան (ծն. 1863, Թիֆլիս, † 1898, Մայիս 11, Վարչաւա) զարմացուած է իւր «Հայ բանուրը», «Արեւ կը ծագէ», «Օրօրոցի մօտ» նկարներով : Դժուար է ըսել թէ ինչ յարաբերութեան մէջ պարած է սա Այլազովսկիի հետ, եւ ի՞նչ չափով ազդուած է անկէ :

Ձեռք ուղեր անյիշատակ թողուլ ժամանակակից հայ հզօր դէմք մ'ալ, Ժ. Տամատ (ծն. 1839, Կ. Պոլիս) : Թէպէտ իր մէջ ծովանկարչութիւնը չհասաւ այն բարձրութեան, ուր կը գտնուի Այլազովսկի, բայց նա մէկն է այն տաղանդներէն, որոնք կարող են հակակռէլ Կաթիկոֆի, Պրոկոֆիէվի ստեղծագործութիւններու այժմ ու թափը : Կարժէ որ այս նկարչին դէմքը աւելի մօտէն ուսումնասիրուի :

Այլազովսկիի ազդեցութիւնը սահմանափակուած չէ խումբ մը արուեստագէտներու մէջ . ամբողջ աշխարհի ժամանակակից նկարչներու վրայ ազդեց նա որոշ չափով : Յուցահանդէսները, զորոնք տուաւ Այլազովսկի քաղաքակիրթ աշխարհի կարեւորագոյն կենդրոններու մէջ, իր նկարները, որոնք ցրուեցան ամէն ուղղութեամբ եւ գրաւեցին պատուաւոր տեղ թէ հասարակաց թանգարաններու եւ թէ մասնաւորներու ապարանքներու մէջ, եղան, են եւ պիտի ըլլան խօսուն օրինակներ Մեծ Վարպետի Դպրոցին ուղղութեան : Գեղարուեստագէտները չկանգնեցան միայն անոնց սովել ախնապիշ նայելու եւ զարմանալու արուեստին կատարելութեան եւ հմայքին վրայ, այլ եւ աշխատեցան թափանցելու արուեստին թաքուն ծաղերուն, ըմբռնելու արուեստին արուեստը : Այսպէս Այլազովսկիի Դպրոցը կը շարունակէ իւր գոյութիւնը, կը ներշնչէ արուեստագէտներ եւ կը յարուցանէ նոր աշակերտներ : Եւ ո՞ր ծովանկարչն է, որ չէ գտնուած Այլազովսկիի հմայիչ ազդեցութեան տակ :

Ի Գ .
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՅՎԱԳՈՎՍԿԻԻ ՀԱՅՐԵՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Արուեստագէտին կեանքի ճանապարհներն եւ հոգեկան ապրումներն ուսումնասիրելու համար մեր ձեռքը իբր վաւերական աղբիւր պիտի ծառայէին անոր նամակները, զորոնք գրած էր իր երկար կեանքի օրերուն : Դժբախ-